ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ԹԻՎ 2 ԴԱՏԱԿԱՆ ԿԱԶՄԻ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ Ը

ԱՆՀԱՏԱԿԱՆ ԴԻՄՈՒՄԻ ԸՆԴՈՒՆԵԼԻՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Քաղ. Երևան 28 հունիսի 2018թ.

Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանի
թիվ 2 դատական կազմը՝

Նախագահությամբ՝ Ա. Խաչատրյանի
Անդամակցությամբ՝ Ֆ. Թոխյանի
Հ. Նազարյանի

Ուսումնասիրելով Ռուբեն Մանուկյանի անհատական դիմումի ընդունելիության հարցը՝

Պ Ա Ր Զ Ե Ց.

1. Ռուբեն Մանուկյանի դիմումը Սահմանադրական դատարան է մուտքագրվել 2018 թվականի մայիսի 29-ին: Սահմանադրական դատարանի աշխատակազմի ղեկավարի 2018 թվականի մայիսի 31-ի Ա-357 գրությամբ այն վերադարձվել է դիմողին: Դիմողը 2018 թվականի հունիսի 8-ին բողոք է ներկայացրել անհատական դիմումը վերադարձնելու դեմ: ՀՀ սահմանադրական դատարանի թիվ 1 դատական կազմի՝ 2018 թվականի հունիսի 11-ի ՍԴԴԿՈ/1-16 որոշմամբ դիմողի բողոքը բավարարվել է, և անհատական դիմումը կրկին մուտքագրվել է Սահմանադրական դատարան:

Դիմողը Սահմանադրական դատարան ներկայացրած իր դիմումում վիճարկում է. «... ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի հոդված 130, հոդված 121 նորմերի կիրառման սահմանադրականությունը»:

2. Դիմողը գտնում է, որ դատական ակտերում առկա սխալները, որոնք վերաբերում են կենսաթոշակի վերահաշվարկին, իր համար առաջացրել են մի շարք բացասական հետևանքներ:

Ըստ դիմողի՝ ՀՀ Շիրակի մարզի ընդհանուր իրավասության դատարանի 2009 թվականի հոկտեմբերի 9-ի թիվ ՇԴ/0587/02/09 քաղաքացիական գործով կայացրած վճռով, ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի 2009 թվականի դեկտեմբերի 23-ի թիվ ՇԴ/0587/02/09/09 որոշմամբ, ՀՀ արդարադատության խորհրդի 2010 թվականի ապրիլի 22-ի ԱԽ-6-Ո-07/2010 որոշմամբ՝ իր ապահովագրական ստաժն ապացուցված և հաստատված է եղել 31 տարի 8 ամիս ժամկետով: Դրան նաև ավելացել է 14 տարի 5 ամիս ու 19 օր և 2 տարի 5 ամիս ապահովագրական աշխատանքային ստաժ, և արդյունքում իր ապահովագրական ստաժը կազմել է 48 տարի 6 ամիս և 19 օր:

Դիմողը նշում է, որ մինչ ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի 2009 թվականի դեկտեմբերի 23-ի թիվ ՇԴ/0587/02/09/09 քաղաքացիական գործով որոշման ուժի մեջ մտելն ինքը 2008 թվականի ապրիլից 2011 թվականի հունվարի 1-ը ստացել է կենսաթոշակի չվճարված գումարների տարբերությունը:

Դիմողի կարծիքով՝ հետագայում կենսաթոշակի վերահաշվարկին վերաբերող «...հետադարձ ուժ տված վատթարացնող՝ առ ոչինչ, դատական ակտերի (10.11.2010թ., 25.03.2011թ., 15.02.2013թ.)...» հիման վրա դատարանները չեն հաստատել 48 տարի 6 ամիս և 19 օր ապահովագրական աշխատանքային ստաժը՝ շրջանառության մեջ թողնելով 36 տարի 11 ամիս և 16 օր աշխատանքային ստաժի հաշվարկը:

3. Ելնելով դիմումի և դատական ակտերի ուսումնասիրությունից, ինչպես նաև ղեկավարվելով «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ սահմանադրական օրենքի 29 և 69-րդ հոդվածների պահանջներով՝ ՀՀ սահմանադրական դատարանի թիվ 2 դատական կազմը գտնում է, որ գործի քննության ընդունումը ենթակա է մերժման՝ հետևյալ պատճառաբանությամբ.

դիմողը չի սպառել ներպետական դատական պաշտպանության բոլոր միջոցները:

Այսպես, գործի դատավարական նախապատմությունը վկայում է, որ դիմողը խնդրո առարկա թիվ ՇԴ/0587/02/09/09 դատական գործի շրջանակներում ներկայացրել է վճռաբեկ բողոք, որը 2011 թվականի մայիսի 4-ին ՀՀ վճռաբեկ դատարանի որոշմամբ վերադարձվել է դիմողին: Նշյալ որոշմամբ դիմողին տրամադրվել է մեկամսյա ժամկետ՝ որոշմամբ արձանագրված թերությունները վերացնելու և վճռաբեկ բողոքը կրկին ներկայացնելու համար: Մինչդեռ, գործի նյութերից երևում է, որ դիմողը **կրկին վճռաբեկ բողոք չի ներկայացրել և, հետևաբար, չի սպառել ներպետական դատական պաշտպանության բոլոր միջոցները:**

ՀՀ սահմանադրության 169-րդ հոդվածի 1-ին մասի 8-րդ կետի համաձայն՝ Սահմանադրական դատարան կարող է դիմել յուրաքանչյուր ոք՝ կոնկրետ գործով, երբ առկա է դատարանի վերջնական ակտը, սպառվել են դատական պաշտպանության բոլոր միջոցները և վիճարկում է այդ ակտով իր նկատմամբ կիրառված նորմատիվ իրավական ակտի դրույթի սահմանադրականությունը, **ինչը հանգեցրել է Սահմանադրության 2-րդ գլխում ամրագրված իր հիմնական իրավունքների և ազատությունների խախտման՝ հաշվի առնելով նաև համապատասխան դրույթին իրավակիրառ պրակտիկայում տրված մեկնաբանությունը:** «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ սահմանադրական օրենքի 69-րդ հոդվածի 1-ին մասը, հիմնվելով վերոնշյալ սահմանադրական նորմի վրա, սահմանում է այն հիմքերը, որոնց միաժամանակյա առկայության պարագայում ֆիզիկական կամ իրավաբանական անձը կոնկրետ գործով անհատական դիմում կարող է ներկայացնել Սահմանադրական դատարան: Դրանք են՝

ա/ երբ կոնկրետ գործով առկա է դատարանի վերջնական ակտը,

բ/ **երբ սպառվել են ներպետական դատական պաշտպանության բոլոր միջոցները,**

գ/ երբ վիճարկում է այդ ակտով իր նկատմամբ կիրառված նորմատիվ իրավական ակտի դրույթի սահմանադրականությունը, ինչը հանգեցրել է Սահմանադրության 2-րդ գլխում ամրագրված իր հիմնական իրավունքների և ազատությունների խախտման՝ հաշվի առնելով նաև համապատասխան դրույթին իրավակիրառ պրակտիկայում տրված մեկնաբանությունը:

«Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ սահմանադրական օրենքի 69-րդ հոդվածի 1-ին մասում նշված որևէ հիմքի բացակայության դեպքում անհատական դիմում ներկայացրած ֆիզիկական կամ իրավաբանական անձը Սահմանադրական դատարան դիմելու համար **իրավասու սուբյեկտ չէ**:

Ելնելով վերոշարադրյալից և ղեկավարվելով «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ սահմանադրական օրենքի 29-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով և 69-րդ հոդվածի 1-ին մասով՝ ՀՀ սահմանադրական դատարանի թիվ 2 դատական կազմը

Ո Ր Ո Շ Ե Ց.

Ռուբեն Մանուկյանի անհատական դիմումով գործի քննության ընդունումը մերժել:

Նախագահող՝

Անդամներ՝

28 հունիսի 2018 թվականի
ՍԴԴԿՈ/2-19